ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

(առարկա)

Թեմա՝ «Գնահատում: Գնահատման տեսակները, գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում»

Կազմեց՝ Խաչատրյան Աննա

Դպրոց՝ Քաջարանի թիվ 5 միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Լուսինե Բալայան

«Կապանի N2 ավագ դպրոց» ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ.....5

ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ..... 16

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՀԱՎԵԼՎԱԾ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եղե՛ք անկեղծ ձեր գնահատականում և շռայլ՝ գովեստում,
և մարդիկ հիշողության մեջ կպահեն ձեր խոսքերը,
կփայփայեն դրանք և կկրնկնեն ողջ կյանքում,
շատ տարիներ, երբ դուք արդեն մոռացված կլինեք:
Դեյլ Քարնեգի[1]

Թեմայի արդիականությունը: Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման կարևոր պայման է ուսուցչի կողմից աշակերտների կրթական և ճանաչողական առաջընթացի մասին օբյեկտիվ տեղեկատվության համակարգված ստացումը, որը իրականացվում է հիմնականում գնահատման միջոցով, իսկ գնահատում կարելի է իրականացնել տարբեր հաճախականությամբ: Հարկ է նշել, որ առօրյա հաղորդակցման մեջ կիրառվում են «գնահատական» և «գնահատում» եզրույթները որպես հոմանիշներ, սակայն դրանք տարբերվում են այնքանով, որ գնահատումը լինում է նաև պարզապես բառերով՝ որպես բանավոր գնահատում: Կարելի է ասել, որ գնահատմանը կարող է հաճախ հաջորդել գնահատական՝ թվանշան կամ պարզապես որևէ պայմանական նշան: Այսօր, երբ կրթական նոր չափորոշիչը փորձարկման փուլում է, կարծիք կա, որ գնահատականներն ամենևին էլ անհրաժեշտ չեն ուսումնական գործընթացում (ըստ հանրակրթական պետական նոր չափորոշչի՝ միավորային գնահատում չի իրականացվում 1-4-րդ դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում[2]), այլ, ընդհակառակը, խանգարում է անձի զարգացմանը: Այս տեսակետը շատ տարակարծությունների տեղիք է տվել մանկավարժական համայնքում և բուռն քննարկումների նյութ դարձել, հետևաբար գնահատման ավանդական և նոր մոտեցումների թեման ինձ՝ ուսուցչիս համար շատ

[1] Դեյլ Քարնեգի, Գնահատել մարդկանց https://npatak.wordpress.com/2013/11/27/%D5%A4%D5%A5%D5%B5%D5%AC-%D6%84%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D5%A3%D5%AB-%D5%A3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%A5%D5%AC-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%AF%D5%A1%D5%B6%D6%81/

[2] ՀՊՉ, IX, կետ 44 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

հետաքրքիր ու **արդիական** թվաց, ուստի ընտրեցի որպես հետազոտական աշխատանքի թեմա:

Ուսումնասիրության առարկան սովորողների կրթական գործունեության մեջ կիրառվող գնահատումն է ու դրա տեսակները, դերն ու նշանակությունը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ժամանակակից կրթական համակարգի գնահատման տեխնիկան ու տեսակները, գնահատման գործիքները դասավանդման շրջանակներում:

Հետազոտական աշխատանքում վերոնշյալ առաջադրված նպատակին հասնելու համար առաջադրել ենք հետևյալ **խնդիրները**.

- ✓ Ուսումնասիրել թեմայի վերաբերյալ գրականությունը, հանրակրթության պետական նոր չափորոշիչը, կատարել գրականության վերլուծություն,
- ✓ Բացահայտել սովորողների գիտելիքների , հմտությունների և կարողությունների ստուգման և գնահատման կազմակերպման տարբեր տեսակները, այդ տեսակների առանձնահատկությունները,
- ✓ Բացահայտել դասարանում սովորողների կրթական և ճանաչողական գործունեության գնահատման դերը:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, մեկ գլխից՝ հիմնական նյութից, որի հիման վրա կատարվել են եզրակացություններ, աշխատանքին կցված է օգտագործված գրականության ցանկը և Հավելվածը՝ թեմային համապատասխան մեկ դասապլանի օրինակ: Աշխատանքը բաղկացած է 20 համակարգչային էջից:

ԳԼՈՒԽ 1. ԳՆԱՀԱՏՈՒՄ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

Մենք գնահատում ենք ոչ թե մարդուն,

այլ նրա մտքերն ու ձեռքբերումները[3]:

Արսեն Վենգեր

Գնահատումը ուսուցիչների մանկավարժական գործունեության մի մասն է կազմում, որը պետք է կատարվի շատ նրբանկատորեն, որպեսզի աշակերտին մոտիվացնի, չնայած հաճախ կարելի է նկատել, որ գնահատման նշանը՝ գնահատականը, բացասականորեն է ազդում երեխայի հոգեբանության վրա և նրան մատնում ուսումնական գործընթացի նկատմամբ անտարբերության: Այնուամենայնիվ ուսուցչի կողմից յուրաքանչյուր աշակերտի գործունեության գնահատումը պարտադիր է, որը, սակայն, պետք է և շատ կարևոր է, որ ուղղված լինի առարկայական գիտելիքների և ճանաչողական հմտությունների որոշակի արդյունքի բացահայտմանը: Ակամայից այս թեմայի շրջանակում հիշում ենք հայտնի գիտնական Էյնշտեյնի խոսքը. «Դասարանում յուրաքանչյուրը հանճարեղ է, բայց եթե դուք ձկանը պետք է գնահատեք ծառի վրայով սողալու կարողության համար, ապա նա ամբողջ կյանքում կտառապի այն մտքից, որ ինքն անկարող է»:

«Գնահատում» բառը կրթական ոլորտում կիրառության մեջ է մտել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1945թ.: Կրթական գնահատումը լայն հասկացություն է, որը նկարագրում է ցանկացած գործունեություն, որը կարող է իրականանալ սովորողի կամ սովորողների գիտելիքների վերաբերյալ տեղեկություններ ստանակու նպատակով: Նոր մոտեցումներով գնահատումը ոչ միայն սովորողի առաջադիմության փաստագրումն է, այլև ուսուցման ընթացքի խթանման, կարգավորման, վերահսկման և բարելավման մեխանիզմ:

Գնահատումը ուսումնական գործընթացի եռակողմ հարաբերություններում՝ աշակերտ-ուսուցիչ-ծնող, սովորողի գիտելիքների, հմտությունների և կարողունակությունների բացահայտման փոխադարձ կապի մեջ վճռորոշ դեր ունի,

[3] Образцов П. И. Методы и методология психолого-педагогического исследования. — СПб.: Питер, 2004.

յուրաքանչյուր կողմի համար բացահայտում է սովորողի ուժեղ կամ թույլ կողմերը: Այսպիսով՝ աշակերտի համար գնահատականը պետք է խրախուսի, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները: Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին: Այն փաստը, որ սովորողը խնդիր չի կարողանում լուծել, դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին: Ուսուցչի համար այն պետք է աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու միջոց լինի:

Ծնողի համար այն պետք է երեխայի առաջընթացն արձանագրելու, ինչպես նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի ճկուն և բազմազան դարձնելու միջոց հանդիսանա: Այլոց՝ շահագրգիռ կամ հետաքրքրված անձանց համար (մանկավարժական անձնակազմ և այլն) ուսումնական նյութի ազդեցությունը տեսնելու, երեխայի մասին տեղեկություններ ունենալու միջոց լինի:

Ինչ վերաբերում է ակադեմիական գիտելիքների բուն բացահայտմանը, ապա այն դիտարկվում է բացառապես երեք դիրքերից՝

- ✓ Գիտելիքի համակարգված բնույթ,
- ✓ Գիտելիքի ընդհանրություն
- ✓ Գիտելիքի սուբյեկտիվություն[4]:

Սովորողի գործունեության գնահատումը դիտարկվում է միայն երեխայի նախորդ հաջողությունների կամ ձախողումների դինամիկայի մեջ և չպետք է ենթադրի համեմատություն այլ երեխաների հետ: Գնահատումը մանկավարժական գործողություն է, որն ուղղված է կրթական տարբեր մակարդակներում երեխայի կրթական գործունեության զարգացման մակարդակի բացահայտմանը, ինչպես նաև նրա ընդհանուր կարողունակությունների ձևավորման գործընթացին. «Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների՝

[4] Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն.Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:

չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաև դիրքորոշումների ու արժեքների ձևավորման»[5]:

Ըստ նոր չափորոշչի՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ընթացիկ գնահատումն իրականացվում է երկու եղանակով՝ քանակական կամ միավորային և ձևավորող կամ ուսուցանող:

Քանակական (միավորային) գնահատման համար կիրառվում է 10- միավորային սանդղակ, որտեղ որևէ թիվ անվաբարար գնահատական չի համարվում, և յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որևէ մակարդակ, սա ինքնին ենթադրում է դրական հոգեբանական տեղաշարժ ցածր առաջադիմություն ունեցող երեխայի հոգեբանության մեջ: Այս փոփոխությունը, ըստ որոշ մանկավարժների, կնվազեցնի նաև դպրոցական բուլինգի դեպքերը, որոնց զոհերը հիմնականում ցածր առաջադիմությունից ցածր ինքնագնահատական ունեցող երեխաներն են: Հանրակրթության ոլորտում պայմանականորեն տարանջատում են գիտելիքի ներքին և արտաքին միավորային գնահատման ձևեր:

Արտաքին գնահատումը իրականացվում է դպրոցից դուրս գործող համապատասխան կազմակերպությունների կողմից: Սովորողների գիտելիքների կողմից ամփոփիչ գնահատման դրական արդյունքները հիմք են դառնում շրջանավարտին կրթական ավարտական փաստաթուղթ տալու, որակավորում շնորհելու, կամ մասնագիտական ուսումնական հաստատության ընդունելությանը մասնակցելու համար:

Արտաքին գնահատմամբ բացահայտվում են ուսումնական գործընթացի ամբողջական արդյունքները, ինչպես նաև՝ որոշակի առարկայի յուրացման մակարդակը առանձին դպրոցում, մարզում կամ հանրապետության ողջ տարածքում : Ըստ նպատակադրման կիրառվում են գնահատման հետևյալ ձևերը՝

- Ընթացիկ գնահատում
- Ամփոփիչ գնահատում
- Հայտորոշիչ գնահատում

[5] ՀՊՉ, , IX, կետ 37 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

- Ձևավորող գնահատում
- Հետազոտական գնահատում[6]

Ներքին գնահատումը կիրառվում է դասի ընթացքում ՝ հարցման, ուսուցողական, ստուգողական միջոցով, դասընկերների և ուսուցիչների առօյա շփումների, ուսումնական գործունեության ամփոփման ընթացքում: Այս ձևով գնահատվում են ոչ միայն յուրաքանչյուր սովորողի ձեռք բերած գիտելիքներն ու կարողությունները, այլ նրա զարգացման ընթացքը: Միավորային գնահատումը կիրառվում է սկսած 5-րդ դասարանի երկրորդ կիսամյակից: Ընդհանրապես սովորողներին կարելի է գնահատել ցանկացած հաճախականությամբ՝ ըստ ուսուցչի ցանկության և իրավիճակի՝ և՛ յուրաքանչյուր օր, և՛ յուրաքանչյուր շաբաթ, և՛ յուրաքանչյուր ամիս: Յուրաքանչյուր օրվա կամ շաբաթվա գնահատական կարելի է համարել ոգևորիչ խոսքը՝ որպես ձևավորող գնահատման նախահիմք: Իսկ յուրաքանչյուր ամսվա գնահատումը ամփոփված է գնահատանիշի՝ միավոր գնահատականի մեջ: Սովորողների գնահատում են այն ժամանակ, երբ դասավանդողին, ինչու չէ նաև սովորողին անհրաժեշտ է լինում հասկանալ՝ գիտելիքների ինչ պաշար ունի նա:

Ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ձևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը: Ձևավորող գնահատման առանձնահատկություններն են՝

- ✓ ուսուցչին հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի ձեռքբերումները,
- ✓ ապահովում է հետադարձ կապն ուսումնական գործընթացում, որի արդյունքների հիման վրա իրականացվում են աշխատանքներ յուրաքանչյուր սովորողի և ամբողջ դասարանի առաջադիմության բարելավման ուղղությամբ,
- ✓ կարող է իրականացվել թեստերի, բանավոր հարցումների, գործնական, տնային աշխատանքների միջոցով:

6 ՀՊՉ, , IX, կետ 37 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

- ✓ օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ, վերլուծություններ և մեկնաբանություններ:

Ձևավորող գնահատման վերաբերյալ կան թյուր ընկալումներ, որ չի կարող ապահովել մոտիվացիան և վերահսկողությունը դասարանում, սակայն փորձը ցույց է տալիս, որ շատ կարճ ժամանակահատվածում աշակերտը դադարում է տալ ավանդական հարցը՝ ի՞նչ ստացա, այլ կարող է նայել աչքերիդ և անգամ ուսուցչի հայացքից հասկանալ իր ձեռքբերումը կամ հետընթացը: Սովորողին կարող են գնահատել թե՛ դասավանդողը, թե՛ մյուս սովորողները: Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ այդ գնահատումը պարտադիր չէ լինի գնահատականի տեսքով: Ցանկացած գոհունակության խոսք, ոգևորող արարք կարելի է համարել դրական գնահատական: Եվ, հակառակը, դժգոհությունը կարելի է համարել որպես բացասական գնահատական: Շատ կարևոր է, որ սովորողը կարողանա ինքն իրեն գնահատել, բայց գնահատի օբեկտիվ և արդար՝ առանց իրեն առավելություն տալու, դիմացինին՝ թերագնահատելու:

Ձևավորող գնահատման բաղադրիչներն են՝

- ✓ Սովորողների մոտիվացիայի ապահովում,
- ✓ Սովորողների ուսումնառության գործընթացի շտկում,
- ✓ Սովորողների գործուն մասնակցությունը սեփական ուսումնառությանը,
- ✓ Ինքնագնահատումը և փոխադարձ գնահատում,
- ✓ Հետադարձ կապի ապահովում[7]:

Ձևավորող գնահատումը սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման հետ կապված թերըմբռնումների, սխալների ու դժվարությունների բացահայտման և դրանց հաղթահարման, սովորողի մտածողության ու ճանաչողության ոլորտն ընդլայնելու համակարգված գործընթաց է: ԿԱՊԿՈՒ սովորողի համար օգտակարն արդյունավետ է ձևավորող գնահատման կիրառումը, որի դերը մեծ է թե՛ հոգեբանական, թե՛ ուսուցման առումով սովորողի զարգացման համար: Մեր կարծիքով պետք է բարձրացնել ձևավորող գնահատման դերը որպես ԿԱՊԿՈՒ սովորողի գնահատման

7 ՀՊՉ, , IX, կետ 37 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

նպատակահարմար միջոց, քանի որ մեր կրթահամալիրի ուսուցչակազմը իր պատմության ողջ ընթացքում միշտ ուշադրություն է դարձրել այն մեկնաբանությանը կամ գնահատականին, որը հետադարձ կապի դեր է կատարել աշակերտի հետ հարաբերություններում, դա պիտի խրախուսի կամ իջեցնի երեխայի խանդավառության աստիճանը: Ձևավորող գնահատումը պետք է ճանաչվի որպես կենտրոնական՝ դասարանային պրակտիկայում, ինչպես ԿԱՊԿՈՒ, այնպես էլ մյուս սովորողների համար, քանի որ դասարանում ուսուցչի և աշակերտի կատարած աշխատանքի մեծ մասը կարելի է որակավորել որպես գնահատում:

1-4 դասարաններում և 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի[8]: 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող՝ ԿԱՊԿՈՒ սովորողների գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփոիչ ատեստավորումը կարող է իրականացվել ըստ ԱՈՒՊ՝ 10- միավորային սանդղակով կամ կարող է պարզապես չիրականացվել և տրվել համապատասխան փաստաթուղթ ըստ ԱՈՒՊ-ի չափանիշների:

Գնահատման տեսակներն են

- ✓ Բանավոր հարցում,
- ✓ Գրավոր աշխատանք՝ էսսե, շարադրանք
- ✓ Թելադրություն կամ թեստ
- ✓ Գործնական աշխատանք
- ✓ Թեմատիկ աշխատանք
- ✓ Ամփոփիչ աշխատանք[9]

---

8 Հանրակրթության պետական նոր չափորոշիչ https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

[9] ՀՊՉ, , IX, կետ 37 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Բանավոր հարցում: Գնահատման այս գործիքն ունի առանձնահատկություն, որ այն ծառայում է ոչ միայն ուսումնական գործընթացի ընթացքում աշակերտների կողմից ձեռք բերված գիտելիքների գնահատմանը, այլ նաև նրանց հաղորդակցման և ազդեցության հմտություններին:

Գրավոր աշխատանք՝ էսսե, շարադրանք:

Ուսուցիչը դասի ընթացքում կամ դրանից դուրս պետք է կարողանա ստուգել և աշակերտի հետ վերլուծել տնային աշխատանքներում աշակերտի ցուցաբերած առաջընթացն ու թերությունները: Տնային աշխատանքը կարող է գնահատվել միավորով, եթե այն ստուգվում է որպես բանավոր հարցման գնահատական:

Գործնական աշխատանք: Գործնական աշխատանքը նպատակ ունի որոշակի առարկայի մասին սովորելը չափել ավելի օբյեկտիվ կերպով՝ դիտարկելով աշակերտների կողմից գործնական առաջադրանքի կատարման արդյունքում ձեռք բերված գիտելիքները:Այս տեսակի գնահատման գործիքի հիմնական տարբերությունը նախորդների հետ այն է, որ այն չափում է ոչ միայն տեսական գիտելիքները, այլև այն իրական-գործնական համատեքստում կիրառելու կարողությունը:

Օրինակ, 2-րդ դասարանում «Ես և շրջակա աշխարհ» առարկան անցնելու սկզբնական փուլում՝ «Ով եմ ես» թեմայի ուսումնասիրության ժամանակ, սովորողների ուշադրության, հմտությունների վերհանելու նպատակով կարելի է հանձնարարել պարզ դիտումներ մարդու կառուցվածքի շուրջ, նշել թե որ մարմնի մասը ինչ գործառույթ ունի, իսկ ԿԱՊԿՈՒ աշակերտը դասին կմասնակցի իր հաղորդակցման առանձնահտկությանը համապատասխան՝ ըստ ԱՈՒՊ-ի պահանջների:

Իսկ ահա մայրենիի ուսուցման ժամանակ դերախաղի կազմակերպումը, թեմատիկ ֆիլմի դիտումը և դրա մեկնաբանումը կարող են բավականին լավ տեղեկություն հաղորդել թեմայից կամ դասից առաջ սովորողների նախնական գիտելիքների մասին, զարգացնել գրագետ խոսք կառուցելու հմտությունը: Դերախաղը կարող է լինել կարճ և ամփոփ, որպեսզի հնարավորինս շատ սովորողներ կարողանան ցուցադրել իրենց իմացությունը: Այս մասին կներկայացնենք նաև Հավելվածում ներառված դասապլանում:

Ամփոփիչ աշխատանք: Սա գործընթաց է, որի ընթացքում ուսումնառության արդյունքներն ուսումնասիրվում են այն ավարտելուց հետո: Դրա հիմնական նպատակն է ստուգել, թե որքան են սովորել աշակերտները, ուստի այն կենտրոնանում է տեղեկատվություն հավաքելու և գնահատման հուսալի մեթոդների մշակման վրա: Աշակերտների սովորածի այս ուսումնասիրության նպատակն է այն համեմատել ստանդարտի հետ, այնպես որ մանկավարժները համոզվեն, որ նրանք բավարարել են կրթական համակարգի առաջարկած նպատակները և վերջնարդյունքները: Մյուս կողմից դրանք կարող են օգտագործվել նաև ստացված արդյունքների հիման վրա ուսուցման մոտեցումը փոփոխելու համար: Այս գործընթացի արդյունքները սովորաբար արտացոլվում են գնահատականների ձևով: Սա հակասում է ձևավորող գնահատման նպատակին, որը հիմնականում նախատեսված է ստանալու հետադարձ կապ աշակերտների ուսուցման գործընթացը բարելավելու համար:

Աշակերտի կրթական գործունեության այս կամ այն աստիճանը չափում ենք հենց գնահատմամբ, իսկ արդյունավետ գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ են արդյունավետ ու արագ իրականացվող գնահատման գործիքներ, որոնցից մեր ուսումնական գործընթացում հաճախ կիրառում ենք

- Թեստային ստուգումը կամ հայտորոշիչ թեստ,

Սա սովորաբար կիրառվում է ուսուցման փուլի սկզբում, որոշելու համար հետագա ուսուցանվելիք նյութի համար սովորողներին անհրաժեշտ հմտությունների մակարդակը կամ ստուգելու հանձնարարված նյութի յուրացման, մտապահման աստիճանը: Կազմված պետք է լինի հիմնականում՝ Փակ առաջադրանքներից, պարզից դեպի բարդը, տրամաբանական հաջորդականությամբ, և մեծամասնության համար լինի հեշտ: Հայտորոշիչ թեստի բնութագրիչ առանձնահատկություններն են.

- Կարճ ժամանակի համար է:
- Որոշակի է:
- Արագ է ստուգվում և արժևորում:
- Բոլոր առաջադրանքներն ուղղված են նույն գիտելիքի, կարողության կամ հմտության ստուգմանը:
- Սովորողների մեծ մասի համար թեստը մատչելի է:

- Արդյունքները հետ վերլուծելով և մեկնաբանելով ՝ կարող ենք որոշել աշակերտների հետ հետագա անելիքները:

Հայտորոշիչ առաջադրանքներ, թեստեր պետք է տրվեն յուրաքանչյուր նոր դասից կամ մի քանի նյութ անցնելուց հետո:

Հայտորոշիչ թեստերին բնորոշ է նաև այն, որ արդյունքը վերլուծվում է առաջադրանքը կատարելուց անմիջապես հետո: Գնահատման արդյունքը կարևոր է ուսումնական նյութի ուսուցման ու յուրացման ընթացքում յուրաքանչյուրի դժվարություններն ու թերացումները պարզելու համար:

- Գնահատման սանդղակները կամ ռուբրիկները

Ռուբրիկները ընդհանրական բնույթ ունեն և կարող են կիրառվել բոլոր առարկաների շրջանակում՝ անհրաժեշտության դեպքում ենթարկվելով մասնակի տեղայնացումների: Ահա մի օրինակ՝ խոսքի խանգարում ունեցող երեխաների համար նախատեսված:

Խոսքի բովան-դակու-թյուն	Ընկալում է իրեն ուղղված խոսքը և արձագանքում՝ հայացքը կենտրոնացնելով խոսողի ուղղությամբ կամ պատասխանելով 1 - 2 բառով:	Պատասխանում է իրեն ուղղված պարզ հարցերին (անհրաժեշտության դեպքում հուշող նկարների ցուցադրմամբ) և տալիս համապատասխան արձագանք՝ օգտագործելով 1 - 2 բառ կամ բառակապակցություն:	Թեմայի շուրջ ուղղորդող հարցերի և թեմատիկ նկարների շարքի օգնությամբ արտահայտում է սեփական մտքերը՝ օգտագործելով մեկ կամ մի քանի պարզ նախադասություն-ներ:	

Խոսքի կառուցվածքը	Արձագանքում է որոշ հնչյունների կամ ձայնարկություն-ների արտաբերմամբ:	Խոսքն արտահայտվում է բառերի արտասանական որոշակի դժվարություններով՝ պայմանավորված՝ մեկ կամ մի քանի հնչյունների արտաբերման խանգարմամբ:	Խոսքը հասկանալի է՝ առանց բառերի բացթողումների:	
Արտա-հայտման ձև	Իրեն ուղղված խոսքին դրսևորում է համապատաս-խան կամ իրեն ծանոթ մի քանի հույզեր:	Խոսքը հաճախակի ընդհատվում է՝ պայմանավորված հույզերով, արտաբերման որոշակի դժվարություններով և ուղեկցվում է մարմնի ավելորդ շարժումներով:	Մտքերը հաղորդում է արտահայտիչ՝ դիմախաղով, ժեստերով և իրեն օգնող շարժումների ուղեկցությամբ (ձեռքի հպում սեղանին, ոտքին, երկու ձեռքերի սեղմում և այլն):	

Մի կարևոր հանգամանք էլ նշենք հենց իմ պրակտիկայից: Ինչ սկսել ենք ռուբրիկը փորձարկել, աշակերտներս ավելի են զգոնացել, աշխուժորեն խաղային իրավիճակի պես գտնում են իրենց համապատասխան կետերը: Փորձում են ավելի գեղեցիկ խոսք կառուցել, տեղին վերլուծություններ կատարել և համեմատություններ տանել իրական կյանքի և թեմայի օրինակների միջև: Շատ հաճախ ձևավորող գնահատման պատասխանը փորձում են վերածել միավորի, բայց նրբանկատորեն փորձում ենք նրանց թվանշան չասել և այդպես գնահատում: Հաճախ "ցածր գնահատական" է ստացվում, այսինքն՝ գոհացուցիչ չի լինում, բայց երեխաները հանգիստ ընդունում են:

- Quizzis հավելվածը

Այս հավելվածը թույլ է տալիս կատարել աշակերտական տեմպերով ձևավորվող գնահատումներ՝ զվարճալի և գրավիչ ձևով, բոլոր տարիքի աշակերտների համար: Quizizz-ն աշխատում է գրեթե ցանկացած սարքի վրա և առաջարկում է

հանրությանը հասանելի վիկտորինաների գրադարան, որոնք ուսուցիչները կարող են օգտագործել իրենց դասարաններում:

- kahoot.it հարթակի գործիքակազմը, որը խաղի վրա հիմնված ուսումնական պլատֆորմ է:

Չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ բաղադրիչները՝1) գիտելիք. 2) հմտություն.3) դիրքորոշում.4) արժեքային բաղադրիչ:»

- ✓ Գիտելիք: Գնահատումը ներառում է առարկայական, հարակից գիտություններից առաջարկվող և ինքնակրթությամբ հետաքրքիր, պահանջվող, ուսումնական նյութերի, դրանց արդյունավետ կիրառման, համեմատման, զուգադրման, վերլուծման և այլ հմտությունների շարունակական զարգացումը, ինչը կապահովի սովորողի մտածողության ճկունությունը և մտահորիզոնի ընդլայնումը:
- ✓ Հմտություն: Գնահատումը ներառում է յուրացրած գիտելիքների հիման վրա մտքի ճկունության զարգացումը, յուրացրած գիտելիքները գործնականում կիրառելու հնարավորությունների ընդլայնումը:
- ✓ Դիրքորոշում: Գնահատումը ներառում է որոշակի իրավիճակում, պարագայում հիմնավորված որոշում կայացնելու կարողությունը, այն ապահովող սկզբունքների կայունությունը:
- ✓ Արժեք: Գնահատումը ներառում է սովորողի կողմից իր կրթական զարգացման, անձնային որակների ձևավորման և կենսական այլ գործընթացներում արժեհամակարգային մոտեցումը[10]:

[10] Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:

ԵԶՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Գնահատում, գնահատման տեսակները և գործիքները դասավանդման շրջանակներում» թեմայով հետազոտական աշխատանքում ուսումնասիրել ենք Հանրակրթության պետական նոր չափորոշիչը և օժանդակ գրականությունը, մեր փորձից բերել համապատասխան օրինակներ գնահատման տարբեր տեսակների շուրջ: Թեմայի ուսումնասիրության շրջանակներում կատարել ենք որոշ եզրահանգումներ, որոնք կներկայացնենք ստորև.

- Գնահատման համակարգի զարգացման ժամանակակից արդի փուլում նկատվում են ուսուցչի գնահատումից անցում դեպի սովորողի մասնակցությամբ գնահատումը: Սա ինքնին ենթադրում է միավորային գնահատումից անցում ձևավորող կամ ուսուցանող գնահատման, որը ՀՀ կրթական համակարգում փորձարկման փուլում է:
- Աշակերտների կողմից նկատվում է միավորային գնահատումից կախվածության թուլացում:
- Ուսուցանող գնահատումն իր բնույթով ընթացիկ գնահատում է: Նրա նպատակը ոչ թե սովորողի փաստական գիտելիքներն ստուգելն ու գնահատելն է, այլ ուսուցման գործընթացը մշտապես ուշադրության կենտրոնում պահելը. պարբերաբար բացահայտել սովորողների դժվարություններն ու ուսումնական չօգտագործված հնարավորությունները և համապատասխան բարեփոխումներով հասնել հնարավոր լավագույն արդյունքին:

- Գնահատումը բացահայտում է աշակերտի բացթողումների և հաջողումների սանդղակը, կարևորը դա կատարվի այնքան նրբանկատորեն, որ աշակերտների համար ստեղծվի առողջ մրցակցային մթնոլորտ: Գնահատումը՝ անկախ տեսակից, ու գործիքակազմից պիտի նպաստի աշակերտի ուսուցման ու կարողունակությունների բացահայտմանը և զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դեյլ Քարնեգի, Գնահատել մարդկանց https://npatak.wordpress.com/2013/11/27/%D5%A4%D5%A5%D5%B5%D5%AC-%D6%84%D5%A1%D6%80%D5%B6%D5%A5%D5%A3%D5%AB-%D5%A3%D5%B6%D5%A1%D5%B0%D5%A1%D5%BF%D5%A5%D5%AC-%D5%B4%D5%A1%D6%80%D5%A4%D5%AF%D5%A1%D5%B6%D6%81/
2. ՀՊՉ, , IX, կետ 37 https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788
3. Հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների ընթացիկ գնահատման մեթոդաբանություն. Ընդհանուր դրույթներ, հիմնական մոտեցումներ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:
4. Սովորողների գնահատման հայեցակարգ, ՀՀ ԿԳՆ, Կրթական ծրագրերի կենտրոն, Երևան, 2005:
5. Образцов П. И. Методы и методология психолого-педагогического исследования. — СПб.: Питер, 2004.

ՀԱՎԵԼՎԱԾ

Օրվա դասի պլան 3

Մասիս: Նոյի տապանը Արարատի վրա /Դաս 2/

Առարկա	Մայրենի /հեղինակներ՝ Վ. Սարգսյան և ուրիշներ/
Ուսուցչուհի	Աննա Խաչատրյան
Դասարան	**2-րդ**
Աշակերտներ	5՝ 3 տղա, 2 աղջիկ
Դասի մեթոդներ	«Դերախաղ», «Շարադրություն 10 րոպեում», «Մեկ կողպեք , երկու բանալի», «ԳՈՒՍ», «Մտագրոհ»
Թեմա	**Մասիս: Նոյի տապանը Արարատի վրա /էջ 122/**
Նպատակ	Ձևավորել՝ • Ավելի լավ ճանաչել սեփական հայրենիքը՝ Մասիսը, դրա հետ կապված պատմությունները • Ծանոթանալ ազգային ավանդազրույցներին,շ • Ինքնուրույն բնութագրել մեր լեռը
Ակնկալվող վերջնարդյունքներ	• Ճանաչել և սիրել իր հայրենիքը, • Իմանալ որտեղից ենք գալիս, որն է հայի առանձնահատկությունը։ • Կարողանա արտահայտիչ կարդալ և վերարտադրել մտքերը, կառուցի կապակցված խոսք։ • Ստանձնի տարբեր դերեր խմբային աշխատանքների քննարկումների ժամանակ։ • Պատմի դիտածը, ընթերցածը, արտահայտի սեփական զգացմունքները, ցանկությունները։ • Իմանա տեքստում առկա բառերի հոմանիշներ, հականիշներ, ուղղագրությունը
Կապը ՀՊՉ-ով սահմանված վերջնարդյունքների հետ	1) ազատ գրավոր և բանավոր հաղորդակցվի գրական հայերենով, կարդա, հասկանա, վերարտադրի պարզ գեղարվեստական և տեղեկատվական տեքստեր, ձևակերպի տեքստի հիմնական գաղափարը (ազգային փոքրամասնությունների պարագայում կարող է նաև իր

	մայրենի լեզվով, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դեպքում՝ համապատասխան այլընտրանքային հաղորդակցման միջոցով). 8) դրսևորի տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանա անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին. 16) ճանաչի իր հայրենիքը, ներկայացնի տեղեկություններ Հայաստանի պատմության, աշխարհագրության, մշակույթի մասին. 18) ճանաչի և հոգատար վերաբերմունք ցուցաբերի իր բնակավայրի և համայնքի բնության և պատմամշակութային ժառանգության օբյեկտների հանդեպ. 25) ճանաչի և համադրի տարբեր զգայարաններով ստացած տեղեկությունները, կիրառի դրանք աշխարհաճանաչողության գործում. 26) արտահայտի սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցի իր յուրահատուկ լինելը.
Խաչվող հասկացություններ	**Անհատներ և հարաբերություններ.** Ինքնաճանաչում, սեփական դերի գիտակցում, պարտականությունների ստանձնում և իրավունք ների իրացում: **Անհատական և մշակութային արժեհամակարգ**. Անհատ – հասարակություն փոխկախվածությունը, մարդու ստեղծած արժեքների ազդեցությունը:
Միջառարկայական կապեր	➢ **Համաշխարհային և հայոց պատմություն**- Հայերի ծագումը և Նոյ նահապետը ➢ **կերպարվեստ**- դասագրքի և համացանցից վերցված նկարների դիտում , քննարկում, ինքնարտահայտում գույների միջոցով ➢ **Երաժշտություն**- թեմայի վերաբերյալ երգի ունկնդրում ➢ **Հայոց լեզու**- բանավոր և գրավոր ճիշտ, գրագետ, փաստարկված խոսքի կառուցում, քերականական անցած նյութի իմացություն

	➢ **Տեխնոլոգիա**- թեմայի շրջանակում համապատասխան դեկորի ստացում, օրինակ, նավակ՝ որպես նոյի տապան ➢ **Գրականություն**-ընթերցում, ունկնդրում
Առաջարկվող գործունեության ձևեր	• Դասագրքի նյութի ընթերցանություն, • տեսանյութի դիտում՝ **Նոյը և տապանը /7 րոպե/** , քննարկում Հղում՝ https://www.youtube.com/watch?v=o_F-dBr6SHE • երևակայական ճանապարհորդություն դեպի Նոյի ժամանակներ • նկարի վերլուծություն • դերային (կերպարային) ուսուցում
Անհրաժեշտ պարագաներ	Ուսումնական նյութեր, դասագիրք, համակարգիչ, Մասիսի մեծադիր նկար
Դասի ընթացքը	➢ Մտագրոհ Մասիս բառի շուրջ, լսում ենք աշակերտների կարծիքը ➢ Դասարանի պատուհանները ծածկված են ծածկոցով և դասարանում կիսամութ է, երեխաները նախօրոք բաժանված և նստած են 2 խմբով՝ առաջինում 2 հոգի, երկու խմբում էլ՝ 3 հոգի ➢ Կիրառվում է դերային ուսուցում, ներս է մտնում Նոյ նահապետը, բարձրանում երևակայական Արարատ լեռը , հանում վարագույրը և բացահայտում Հայաստան աշխարհի հրաշքը՝ Մասիսը, ➢ Ուսուցիչը նախապես կարդում է դասը ներկայացնելով՝ ով է Նոյը ➢ Կարդում են աշակերտները ուսուցչի նշած հատվածը, քննարկում, բոլոր աշակերտներին հարցերի միջոցով ներգրավել դասին: ➢ Օգտվել «2 բանալի և 1 կողպեք» մեթոդից ➢ լրացնել«ԳՈՒՍ» աղյուսակը/ այստեղ անգամ ամենաթույլ ընդունակությամբ աշակերտը պարզապես կարող է գրել իր իմացած որևէ տառ/ ➢ Ունկնդրել Մասիսի մասին նախապես ընտրված երգը՝ Մերի Տերտերյան, Նոյյան տապան **Հղում՝** https://www.youtube.com/watch?v=1bWb0bJ8ODM

	➢ Տնային աշխատանք- «Եթե ես լինեի Մասիսի գագաթին» շարադրություն կամ նկարեն Մասիսը
Գնահատում	Ձևավորող գնահատում/խրախուսվում են ծափերով՝ լավ պատասխան՝ շատ ծափեր/